
**«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԸ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ» ԹԵՄԱՅՈՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

2007 թ. օգոստոսի 26–28-ին Էդինբուրգում (Շոտլանդիա) տեղի ունեցավ «Պատմությունների խորը պատմությունը» (*Deep History of Stories*) թեմայով գիտաժողովը: Այն կազմակերպել էին «Համեմատական առասպելաբանության միջազգային ասոցիացիան» և «Ավանդական տիեզերաբանության ասոցիացիան»: Սա երկու կազմակերպությունների երկրորդ միասնական կոնֆերանսն էր: Առաջինը տեղի էր ունեցել Պեկինում 2006-ին և բարձր գնահատվել մասնակիցների ու գիտական աշխարհի կողմից:

Առասպելների ու պատմողական ժանրի ավանդական այլ ստեղծագործությունների ուսումնասիրությունը սկսվել է վաղուց և ներկայումս նշանակալի արդյունքների է հասել: Բայց և այնպես, գիտության զարգացման մակարդակը թույլ է տալիս առաջ անցնել և նոր որակի հասցնել այդ ուսումնասիրությունները: Հենց այդ նպատակին են ուղղված այդ կոնֆերանսները՝ ներկայացնել նորը և ուրվագծել հետագա հեռանկարները:

Կոնֆերանսի ներկայացուցչական կազմը տպավորիչ էր: Մասնակցում էին համաշխարհային ճանաչում ունեցող մի շարք գիտնականներ: Ելույթ ունեցողների թիվը մոտ քառասուն էր, կային նաև մեկ տասնյակ հրավիրվածներ, այդ թվում՝ ճանաչված գիտնականներ, որոնք մասնակցում էին միայն քննարկումներին: Կոնֆերանսի աչքի ընկնող առանձնահատկություններից մեկը նրա աշխարհագրական լայն ընդգրկումն էր՝ Ճապոնիայից ու Չինաստանից Աֆրիկա, Եվրոպա և Ամերիկա:

Կոնֆերանսը բացվեց Յուրի Բերյոզկինի (*Ռուսաստան*) ելույթով՝ «Աֆրիկայից դուրս և առաջ՝ արևի երկայնքով. աֆրիկական-հարավասիական և ավստրալիական առասպելաբանական զուգահեռներ»: Այս հեղինակի աշխատությունները և մոտեցումները վերին աստիճանի ազդեցիկ են: Նա իր ուսումնասիրություններում համադրում և քննարկում է ամենատարբեր ժողովուրդների, բառիս բուն իմաստով, հազարավոր առասպելներ: Կոնկրետ այս զեկուցման արդյունքը հետևյալն է. Աֆրիկայում առասպելաբանական մոտիվներն աղքատ են ներկայացված: Դրանց բուռն զարգացումը տեղի է ունենցել այն բանից հետո, երբ հնագույն մարդիկ դուրս են եկել Աֆրիկայից և բաժանվել երկու մասի: Քննարկվում է մարդկության մի մասի տարածման ուղին Աֆրիկայից հարավարևելյան Ասիա, ապա՝ Ավստրալիա և Ամերիկա, լուսաբանված ու հիմնավորված այդ տարածքների՝ տիպաբանորեն ամենավաղնջական առասպելների (մահվան առաջացման, արևի ու լուսնի մասին) և առասպելաբանական մոտիվների ընդհանրություններով:

Այս ելույթին իր մոտեցումներով որոշ չափով համահունչ էր Վիմ վան Բինսբերգենի (*Հոլանդիա*) զեկուցումը, որտեղ նա հնագիտական, լեզվաբանական,

գենետիկական, ազգագրական և համեմատական առասպելաբանության քննության հիման վրա փորձում է գնահատել ու դրական պատասխան տալ կենսաբան-գենետիկ Ստիվեն Օպենհայմերի (Մեծ Բրիտանիա) այն թեզին, ըստ որի՝ արևմտաստիական առանցքային առասպելները՝ այդ թվում՝ ջրհեղեղի պատմությունը ծագում է Հարավարևելյան Ասիայից: Ի միջի այլոց, Ս. Օպենհայմերը նույնպես հրավիրված էր կոնֆերանսին և մասնակցեց քննարկմանը:

«Համեմատական առասպելաբանության ասոցիացիայի» նախագահ Մայքլ Վիտցելի (ԱՄՆ) գեկուցումը կոչվում էր «Վիշապամարտը Եվրասիայի երկայնքով»: Հեղինակը փորձում է ծագումնաբանական ընդհանրություններ տեսնել Եվրասիայի և աշխարհի մի շարք այլ շրջանների վիշապամարտի առասպելների միջև՝ պայմանավորված այդ շրջանների բնակչության՝ միևնույն ծագմամբ:

Միայն հենց այս գեկուցումները ցույց են տալիս, թե առասպելների ժամանակակից ուսումնասիրությունը ինչպիսի նոր ուղղություններ կարող է ունենալ և ինչպիսի անսպասելի արդյունքների կարող է հասցնել:

Որոշ գեկուցումներում ներկայացվեցին ընդհանուր մեթոդաբանական հարցեր: Այսպես, Ստիվ Ֆարմերի (ԱՄՆ) ելույթում քննարկվում էին առասպելների ուսումնասիրության առջև կանգնած այն խնդիրները, որոնք դժվարացնում կամ երբեմն անհնարին են դարձնում գիտական իրական գնահատականը (հին և նոր աղբյուրների ու տվյալների խառնվածությունը, առասպելների մշտական փոփոխությունը, իրարից տարբերվող հասարակություններում առասպելների կոնվերգենտ զարգացումը, գիտնականների կողմից օգտագործվող աղբյուրների ոչ հուսալի բնույթը և այլն): Կազուո Մացումորան (Ճապոնիա) խոսեց այն մասին, որ հնդեվրոպական առասպելաբանության մեջ կանանց կերպարներին վերագրվող ոչ էական դերը պայմանավորված է եղել ոչ միայն իրերի օբյեկտիվ դրությամբ, այլև գիտական այդ ուղղության մեջ կին ուսումնասիրողների բացակայությամբ, ինչի հաստատումը նոր տեսակետների առկայությունն է՝ առաջ քաշված կին գիտնականների կողմից:

«Համեմատական առասպելաբանություն» առարկան ձևավորվել և զարգանում է որպես, իրականում, հնդեվրոպական ժողովուրդների առասպելների համեմատական ուսումնասիրություն և, այս առումով, կոնֆերանսում նշանակալի տեղ էին զբաղեցնում հնդեվրոպական թեմատիկային նվիրված գեկուցումները: Դրանց միայն մի փոքր մասը կարելի է անվանել ավանդական՝ խարսխված Ժ. Դյումեզիլի «երեք ֆունկցիաների» տեսության գաղափարների վրա: Առավել շատ էին այդ նույն ուղղության հաջորդ՝ «չորս ֆունկցիաների» և «հնգամաս կառույցների» տեսության կողմնակիցները, ուղղության հիմնադիր Նիք Ալենի (Մեծ Բրիտանիա) գլխավորությամբ:

Հնդեվրոպական ուսումնասիրություններում մշտապես էական դեր է ունեցել հնդիրանական թեմատիկան, որի վերաբերյալ ելույթներ ունեցան մի շարք մասնակիցներ (Բ. Օգիբենին, Բ. Բույաներ, Գ. Դյուկյոր, Վ. Կոյուկովա, Ա. Սանդես): Մի շարք մասնակիցներ ներկայացրեցին կելտական ուսումնասիրություններ (Ջ. Շոու, Գ. Բոնդարենկո, Է. Վայսման, Մ. Ֆոմին), ինչը որոշ չափով պայմանավորված էր այն հանգամանքով, որ կոնֆերանսը տեղի էր ունենում կելտական

երկրում՝ Շոտլանդիայում: Առանձին հիշատակության է արժանի Յարոսլավ Վասիլկովի (Ռուսաստան) զեկուցումը, որտեղ նա փորձեց ցույց տալ, որ Սև ծովի հյուսիսից Արևմտյան Եվրոպա տարածված բրոնզի և վաղ երկաթի դարերի հին քարակոթողները ոչ թե հին աստվածությունների արձաններ են, ինչպես սովորաբար ընդունված է եղել կարծել, այլ հնդեվրոպական ռազմիկին նվիրված հուշարձաններ, որոնց ուշ արձագանքները պահպանվել են Հնդկաստանում և Հունաստանում:

Կարևորվեց և ոչ հնդեվրոպական հասարակությունների վրա հնդեվրոպական ազդեցությունների հարցը: Դանիել Փրայորը (ԱՄՆ) խոսեց հնդեվրոպական ազդեցությունների մասին միջինասիական՝ կրթողական վիպական ավանդության մեջ: Սարիա Տարտարը (Հունգարիա) ներկայացրեց հին կելտական ձիավոր դիցուհու կերպարի հնարավոր արձագանքները Հունգարիայում: Ջոն Կոլառուսոյի (Կանադա) զեկուցման մեջ ներկայացվեց մի նոր հնդեվրոպական վերակազմություն՝ անտառային որսորդ-ռազմիկների ինստիտուտի ծագման վերաբերյալ, հիմնված հնդեվրոպական առասպելական և ոչ հնդեվրոպական՝ չերքեզական (ադրդական) էպիկական մի շարք տվյալների հիման վրա (որտեղ չերքեզական նյութը համարվում է ձևավորված հիմնականում հնդեվրոպական ազդեցությամբ): Այս վերջին մոտեցումը, թեև հետաքրքիր, բայց և մեթոդաբանորեն խոցելի է ու պայմանավորված է հեղինակի՝ կովկասյան էպոսների մասնագետ լինելով:

Ոչ հնդեվրոպական ուսումնասիրությունները պատկանում էին տարբեր ուղղությունների: Ներկայացվեցին և քննարկվեցին այլևայլ, օրինակ՝ Ֆիլիպինների, Մադագասկարի, Չինաստանի, հին և նոր (այդ թվում՝ բուրդայական և դառասական) առասպելներ ու առասպելաբանական կերպարներ: Առանձին ուղղություններ էին կազմում այլ ժանրերի ու երևույթների ուսումնասիրությունները՝ հեքիաթ, պատմական ավանդություններ, հեքիաթային կերպարներ (ասենք՝ ջրահարսեր), որոշ ձեսերի ծագում, հին պատկերագրության առասպելաբանական ու գաղափարախոսական մեկնաբանություն և այլն:

Կոնֆերանսում նկատելի էր ռուսական դպրոցի գիտնականների նշանակալի ներկայությունը, ընդ որում, նրանց մի մասը ներկայացնում էր այլ երկրներ: Արժանահիշատակ է հայաստանցի երկու գիտնականների մասնակցությունը (նախկին ԽՍՀՄ և Արևելյան Եվրոպայի մյուս երկրներից մասնակիցներ կային միայն Հունգարիայից և Լեհաստանից): Ալվարդ Ջիվանյանի զեկուցումը վերնագրված էր «Մանող կանանց հեքիաթների տարածումը քրիստոնեական Մերձավոր Արևելքում. պատմություններ խոսքային նվիրագործության մասին»: Ցույց տրվեց, որ այդ հեքիաթներում խոսվում է կանանց խոսքային նվիրագործության (ինիցիացիա) մասին: Արմեն Պետրոսյանի զեկուցման մեջ՝ «*Danu- և *Hner-. հնդեվրոպական առասպելական հակառակորդներ», փորձ արվեց վերականգնել հնդեվրոպական մի նախնական առասպել, որտեղ հնդեվրոպական աստծու կամ հերոսի հակառակորդները կարող են նույնացվել արևմտասեմական ցեղերի և նրանց աստծու հետ: